

ինչպէս որ մեղուներուն համար ալ կ'ըսուի : Ոյուչուններէն միայն վախ ունին , որ երբոր իրենց ցորենը արեր փուեն՝ կուգան կ'ուտեն . բայց դողերէ վախ մը որ ունենան , հողին տակը կը պահեն : Կ'ըսուի թէ թռչուն կայ որ մըջիւն կ'ուտէ . բայց ես ատ բանը ամենեին չտեսայ : Անը որդերն ալ մըջիւններուն նեղութիւն կուտան . բայց մըջիւնները զանոնք դուրս կը հանեն ու կը սպաննեն : Դիտեր եմ որ ան մըջիւններն որ կ'երենայ թէ իրենց պարտքը չեն կատարեր՝ կը պատժեն , երբեմն կը սպաննեն ալ . որ մէկ հեղ մը աս կերպով ըրին . իրեք չորս մըջիւն մէկուն վրայ ընկան , այնչափ չորս դիէնքաշքրուտեցին՝ որ կտոր կտոր ըրին : Ինդհանրապէս խօսելով շատ խաղաղ են . ասկէ կը մակաբերեմ թէ մէջերնին շատ խիստ կարգաւորութիւն պիտի ըլլայ , որպէս զի ան հանդարտութիւն պահուի . կամ թէ մէջերնին ուրիշ կարգաւորութիւն մը չկայ նէ , շատ խաղաղասէրպիտի ըլլան բնութք :

Ուրիշ ո՞ր հասարակապետութեան մէջ աւելի մեծ միաբանութիւն եղեր է : Անդիւնին ամէն բան հասարակաց է , որ մէկ ուրիշ տեղ մը չենք կը նար տեսնել : Անդուններուն համար այնչափ զարմանալի բաներ կը պատմուին . բայց ամէն մէկը մեղուանոցին մէջ զատ բջիջ ունի . իրենց շինած մեղը իրենցն է . ամէն մեղու իրեն բանը կը մտածէ : Ուրիշ ամէն կենդանիներուն վրայ ալնոյն բանը կը ընանք ըսել . շատ անգամ իրարու հեռագատերազմ կ'ընեն , որ իրարու ձեռքէն իրարու ունեցածը առնեն : Բայց մըջիւնները ասանկ չեն . ամեննեին իրենց առանձին բան չունին . ան ցորենի հատիկն որ մըջիւնը բոյնը կը տանի , հասարակաց համբարանոցը կը պահուի . առանձին իրեն համար չէ , հապա բոլորին համար . հասարակաց ու առանձնական շահու զանազանութիւն չկայ մէջերնին : Անդիւնը իրեն համար չաշխատիր , հապա ընկերութեան համար :

Իրենց ինչ թշուառութիւն որ հանդիպի , ջանքով ու ճարտարու . թեամբ դեղը կը գտնեն , ու բան չըկայ որ զիրենք յուսահատցընէ : Ոյէ որ իրենց բոյնը աւրես , երկու օրուան մէջ կը նորոգեն : Ամէն մարդ գիտէ թէ որ զիրենք դուրս վարնտելը , մինչև որ չարդես . վասն զի թէ որ քանի մը հատ միայն ալ մնան , իրենց տեղերնէն չեն հեռանար :

Անդիւն հիմայ մոռցայ ըսելու թէ փորձուած է՝ որ սնդիկը մըջիւններու մահաբեր թոյն է , և զիրենք ջարդելու համար մէկ հատիկ ազգու հնարք ան է : Անդ բանիս վրայօք մըջիւններուն բան մը կը նամամ ընել . կարելի է թէ քիչ ատենէն լսէք որ սնդիկի ալ զիրենք վարժեցուցեր եմ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻՄԱԿՈՒԹԻՒՆ

Դարրյական դաստիարակութեան մէջ եղած սխալնունիներուն վրայ , և նէ ինչ էրուն առաջը առաջը է :

Բ . Անհանհեմ էրութիւր , որոնց գլխաւորները ասոնք են .

Կ . Անհամբերութեան , որ շատ անգամտղան բան մը ընելուն պէս՝ յանդիմանելով կը պատժեն : Ոյէպէտ և տղայ մը մեծ յանցանք մըն ալ ըրած ըլլայ , միշտ անուշութեամբ խրատելու է . անով տղաքն ալ կ'ըլլան հեղ , և ուրիշներուն վրայ գութ ունեցող :

Հ . Անհաւոր սէր , կամ հողնաւիրութիւն , որով ծնողք կամ վարժապետք աս կամ ան տղան ուրիշներէն աւելի կը սիրեն : Անդ բանիս գէշ հետեանքը ան է որ սիրելի եղած տղան միտքը կը դնէ թէ ինքը զարմանալի կատարելութիւններ ունի , և անոր համար սիրելի է . անով ուրիշներուն վրայ կը գուղանայ , և կ'ուզէ որ ամէն ըսաթեան համար :

Ճ կատարեն. ասանկով տղան կը փժաւնայ : Դարձեալ այսպիսի անիրաւ մասնաւորութենէ առաջ կուգայ՝ որ տղոց մէջ սաստիկնախանձ մը կը մտնէ սիրելի եղած տղուն դէմ, և վերջը կ'ատեն զանիկայ : Ուստի ամենահարկաւոր և խիստ օգտակար բան է, և միանդամայն մեծ պարտք է որ ամէն տղու վրայ նոյն խնամքը ու նոյն սէրը ունենան դաստիարակները :

Դ . Խարդախ էերպէր, որ երբեմն ծընողք կը գործածեն տղոց ստութիւնը դուրս հանելու, և կամ ըրած յանցանքնին խոստովանցընելու համար : Ի՞այց այսպիսի խարդախ կերպերով աղաք ալ կը սորպին խորամանկութիւնը և խարդախութիւն, և իրենց պարզմը-տութիւնը և բարեսրտութիւնը որ այնչափ բնական ու հարկաւոր է իրենց՝ կը կորսընցընեն :

Դ . Ո՞ւշ Եթու երես ցուցնել աղոյ . որով տղաք ալ չեն սիրել իրենց դաստիարակները : Ինդհակառակն ծնողք և վարժապետքպիտի ջանան որ առանց երես տալու սիրելի ըլլան տղոց . և ասով միայն կրնան ինչպէս որ պէտք է տղոց սիրտը շահիլ ու զանոնք կը թել . վասն զի թէ որ տղաք իրենց մեծերուն վրայ սէր ու համարձակութիւն չունենան, ինչպէս կրնան իրենց սիրտը բանալ անոնց, և պակասութիւններուն դարման գտնել :

Բ .

Ա . Ոմանք կարծեն թէ տղաքը վարձատրելու համար պէտք է անոնց փառաւոր ու զարդարուն հագուստներ շինել . բայց անով տղաք չնշին և ունայն բաներու վրայ մեծ համարում կ'առնեն, ու զարդասիրութեան ետեւէ կ'ըլլան :

Բ . Ու արձատրութեն համար պէտք չէ ուտելու բաներ տալ տղոց, որպէս զի որ կրամոլութեան չվարժին . ևս առաւել պէտք չէ տալ այնպիսի բաներ որ իրենց առողջութեանն ալ վնասակար են : Տղոց աւելի պարգև

տալու է զարդարուն կազմով՝ մաքուր տպած գրքեր, որոնց մէջ տղոց ախորժակին յարմար պատմութիւններ ըլլան, գեղեցիկ առաքինական պատկերներով . վերջապէս պարզեց անանկ բան մը պիտի ըլլայ որ տղոց բարւոյն ու յառաջադիմութեանը գրգիռ մը ըլլայ, և ոչ եթէ անկարգութեն ու չարեաց պատճառ : Ի՞այց որպէս զի պարզեց յարգի բան ըլլայ, պէտք է քիչ անգամ տալ, ան ալ ըստ արժանեաց . ուստի պէտք է տալ ան, իրենց առաքինի բարգին համար .

Ե , Ուսման մէջ առաջ երթալնուն համար .

Դ , Իրենց մարմնոյն կրթութեանը համար :

Դ . Պատժելու ատեն ոմանք շատ անգամ ծանր խօսքերով տղան կը յանդիմանեն . ասով տղան կամ աւելի ծանր յանցանքներ կ'ընէ, կամ քանի կ'երթայ կը թմբի, վախկոտ կ'ըլլայ, և կամ ոխ կը պահէ սրտին մէջ՝ զինքը պատժողին դէմ : մեծնալէն ետեւ ինքն ալ ուրիշի հետ խստութեամբ կը վարուի : Ը ատ անգամ ալ տղաքը կը ծեծեն . բայց աս պատիժը ոչ միայն ամենեին օգուտ չունի, հապա քանի քանի ծանր վնասներու ալ պատճառ կ'ըլլայ . և ան աստիճան բռնաւորական անգութե և անվայել բան է՝ որ ծեծը մարդկային դաստիարակութեմասը չափուիր հիմակուան պէս լուսաւորեալ դարու մէջ : Ի՞ս ծեծէն առաջ եկած վնասներն են, որ տղաք կ'ըլլան անգութե, աներես, խօսքէ ու յանդիմանութենէ չառնող, և փոխանակ ուղղուելու՝ կ'ըլլան յամառ ու չարասսիրտ : Ոմանք ալ ընդ հակառակն՝ կը թմբին, վախկոտ՝ սմբած ու ապուշ՝ կ'ըլլան :


Տղու մը մարմնական պատիժ ան ատեն պէտք է տալ, երբոր բարոյական կրթութիւնները չեն օգտեր : Տղան քանի որ պղտիկ է՝ իրեն զգայուն բնութիւնը պէտք չէ կոշտացընել . վասն զի անիկայ վերջը զինքը կրթե-

լու մի միայն յարմար միջոց կ'ըլլայ :
Պատիժ տալու ատեն պիտի նայուի
որ անանկ պատիժ չտրուի՝ որ տղուն
աղէկ բնաւորութիւններուն վնաս մը
քերէ . և պատիժը յանցանքին հա-
մեմատ պիտի ըլլայ : Դանը պա-
տիժ քիչ անգամ տալու է , ան ալ
միայն այնպիսի յանցանքներու՝ որ

չարամտութէ և գէշ սրտէ առաջ
կուգան : Խակ տղայական և կամ յան-
կարծական յանցանքներուն պէտք է
ներել : Դմենահարկաւոր բաներէն
մէկն ալ տղան համոզելն է՝ թէ ինքը
յանցաւոր է , և ան պատժոյն արժա-
նի է . չէ նէ պատիժը ոչ միայն անօ-
գուտ , հապանակ վնասակար կ'ըլլայ :

ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԴՐՈՒԹԻՒՆ



Վիկոորիա թադուհի ըսուած նոր շուշնչ :

ՎՄԵՐԻԿԱՅԻ անտառներուն և գե-
տերուն մէջ շատ զարմանալի բոյսեր
կան , որոնց վրայ դեռ բնապատում-
ներն ալ քիչ տեղեկութիւն ունին :
Վա բոյսերուն մէջ անուանիներէն

մէկն է նոր Ջրային շուշանը որ 1837^{ին}
Ը ոմապուրք անունով մէկը գտաւ
Պիերպիչէ գետին մէջ , որ հիւսիսային
Վամբիկայի կույանա գաւառին մէջ
կ'իյնայ . և Վնդղիոյ թագուհւոյն